

ԳՅՈՒՂՄԹԵՐՔՆԵՐԻ Մ  
ԱՐՔԵՏԻՆԳ

Գյուղատնտեսության մեջ տեղի ունեցող հողի տնօրինման, օգտագործման և գյուղատնտեսական մթերքների իրացման հետ կապված հարաբերությունները համարվում են ագրարային հարաբերություններ: Հաշվի առնելով ագրարային ոլորտի առանձնահատկությունները, ծառացած խնդիրների մասշտաբներն ու հրատապությունը, երկրի պարենային անվտանգության և գյուղական տարածքների զարգացման առաջնահերթությունը՝ կարևորվում է գյուղի և գյուղատնտեսության համար պետական ակտիվ աջակցությունը: Այն առավելապես ուղղված է ագրարային ոլորտում իրավական հիմքի ձևավորմանը, գյուղատնտեսությունում տնտեսավարողների համար գործունեության և ներդրումների բարենպաստ պայմանների ապահովմանը, արտահանման ուղղվածություն ունեցող արտադրության խթանմանը, գիտական նվաճումների և նոր տեխնոլոգիաների ներդրմանը, սննդամթերքի անվտանգության և մասնագիտական խորհրդատվության համակարգերի զարգացմանը: Հողի և գյուղատնտեսական արտադրության մյուս միջոցների, արտադրական և սպասարկող ենթակառուցվածքների, գյուղմթերքներ իրացնող և վերամշակող կազմակերպությունների մասնավորեցումը հուսալի նախադրյալներ են ստեղծել գյուղում առկա ներուժի արդյունավետ օգտագործման համար:

Առհասարակ, գյուղատնտեսության մեջ տեղի ունեցող փոփոխություններն ավելի



դանդաղ բնույթ են կրում, այսինքն՝ գիտատեխնիկական առաջընթացի ներդրումը տեղի է ունենում ոչ թե միանգամից, այլ աստիճանաբար: Դա նշանակում է, որ ձեռքի աշխատանքի տեսակարար կշիռը գյուտատնտեսության մեջ ավելի բարձր է: Հողերը սահմանափակ են, առավել ևս սահմանափակ են միջին և բարձր բերրիություն ունեցող հողերը, որոնց վրա նույն աշխատանքի կիրառումը ավելի մեծ արդյունք է տալիս, քան վատագույն հողերի վրա կիրառվող նույն աշխատանքը: Հողերն, ըստ բերրիության, լինում են.

բնական

արհեստական

Բնական բերրությունն ասելով՝ հասկանում ենք կապիտալի վերին շերտի քիմիական, ֆիզիկական և կենսաբանական հատկությունների այն ամբողջությունը, որը նույն աշխատանքի կիրառման շնորհիվ ապահովում է ավելի բարձր բերք: Ըստ բնական բերրության՝ հողերը բաժանվում են 3 կարգի.



Արհեստական բերրիության հողերը հնարավոր է մի շարք միջոցառումների շնորհիվ դարձնել բարձր բերրի, այսինքն՝ դարձնել ավելի արտադրողական (քիմիացում, ագրոտեխնիկա, հողերի չորացում և այլն): Փաստորեն արհեստականորեն բարձրացվում է նրանց բերքատվության աստիճանը:

Գյուղատնտեսության մեջ ամենագլխավոր առանձնահատկությունը գյուղմթերքների գների ձևավորումն է, գնագոյացման սկզբունքը: Գյուղատնտեսության մեջ գյուղմթերքների գինը ձևավորվում է ոչ թե վատագույն հողերի վրա կատարված աշխատանքային ծախսերից, այլ միջին բերրիություն ունեցող հողերի աշխատանքային ծախսերից:



Ակնհայտ է, որ վատագույն հողերի վրա կատարված աշխատանքային ծախսումները չեն փոխհատուցվի. նշանակում է, որ տնտեսապես ձեռնտու չէ այն մշակել, իսկ եթե այս պայմաններում չմշակվեն վատագույն հողերը, դրա հետևանքն այն կլինի, որ միջին և բարձր բերրիություն ունեցող հողերը չեն կարող ապահովել գյուղմթերքների այնքան արտադրանք կամ առաջարկի այնքան ծավալ, որ ծածկի բնակչության կողմից ներկայացված գյուղմթերքների գնի բարձրացումը: Այսպիսով, առաջանում է տնտեսական անհրաժեշտություն՝ մի կողմից բնակչության ամբողջ պահանջարկը գյուղմթերքների գծով բավարարելու համար մշակել վատագույն հողերը, իսկ մյուս կողմից՝ գյուղմթերքների գների բարձրացումը, որը գերազանցում և փոխհատուցում է վատագույն հողերի վրա կատարվող արտադրության ծախսերի միջին մակարդակը:



## Գյուղատնտեսության ներկա վիճակը

Անկախության հռչակումից անմիջապես հետո ընտրվեց հողի և գյուղատնտեսական արտադրության մյուս միջոցների, սպասարկող ենթակառուցվածքների, գյուղմթերքների իրացնող ու վերամշակող կազմակերպությունների մասնավորեցման քաղաքականություն: Արդյունքում, ներկայումս, ագրոպարենային ոլորտում ձևավորվել է շուկայական հարաբերություններով կարգավորվող ազատ տնտեսական համակարգ, որը ներառում է շուրջ 340 հազար գյուղացիական տնտեսություն, գյուղատնտեսությամբ զբաղվող առևտրային կազմակերպություններ, գյուղատնտեսության սպասարկման, գյուղմթերքների իրացման ու վերամշակման բազմաթիվ մասնավոր ընկերություններ:

Հանրապետության գյուղատնտեսական արտադրությունում հիմնական հողօգտագործողները գյուղացիական տնտեսություններն են, որոնք տնօրինում են վարելահողերի ավելի քան 82.0%-ը, բազմամյա տնկարկների՝ 75.0%-ը, խոտհարքների՝ 50.0%-ը: Ներկայումս գյուղատնտեսության համախառն արտադրանքի բացարձակ գերակշռող մասը (ավելի քան 98%-ը) ապահովվում է մասնավոր հատվածի կողմից:

Միանշանակ է, որ հանրապետության գյուղատնտեսության զարգացման գլխավոր ազդակը ագրոպարենային արդյունաբերության զարգացումն է, որին պետք է նպատակաուղղել ագրարային ոլորտի ներդրումային քաղաքականությունը:

Հայաստանի գյուղատնտեսության կարևոր ձեռքբերումներից մեկն էլ միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության զարգացումն է:



## Գյուղատնտեսական ոլիսկեր և վտանգներ

Հայաստանի  
գյուղատնտեսության ոլիսկերն  
ու վտանգները վերահսկելու և  
նվազեցնելու համար  
նախատեսվում է ոլիսկերի  
կանխատեսումը,  
հնարավորինս կանխարգելումը  
և հետևանքների հաղթահարումը:  
Անհրաժեշտ է.

- ✚ գյուղատնտեսության փոխադարձ ապահովագրության համակարգի ներդրման աջակցություն
- ✚ հակակարկտային համակարգի վերականգնման փորձնական ծրագրի իրականացում
- ✚ երաշտի և սակավաջրության պայմաններում ոռոգման ջրի օգտագործման կանոնակարգում և ջրախնայողական տեխնոլոգիաների ներդրում
- ✚ հակահեղեղային և սողանքների կանխարգելիչ միջոցառումների իրականացում
- ✚ գյուղատնտեսական մշակաբույսերի բերքի կանխատեսման ու ծրագրավորման համակարգի ներդրում
- ✚ որակյալ, մասնագիտացված աշխատուժի պակաս
- ✚ վարկավորման ծավալների, տոկոսադրույքի, ժամկետների և գրավադրման անբարենպաստ պայմանների առաջացում
- ✚ Գյուղացիական տնտեսությունների սեփական միջոցների բացակայության, վարկային միջոցների սղության պատճառով մթերվող պտղի անբավարար ծավալներ, ֆերմերային տնտեսությունների կողմից հողային ռեսուրսների ոչ

ռացիոնալ օգտագործման, մթերման համար անհրաժեշտ պտղի սակավության պատճառով մթերման կարողությունների թերբեռնում, ինչպես նաև երաշտի պատճառով մթերման կարողությունների թերբեռնում:

## Գյուղմթերքի անվտանգության ապահովում

Մենդի անվտանգության ստանդարտներին համապատասխանությունը կբարձրացնի Հայաստանի գյուղատնտեսության մրցունակությունը: Մրցունակությունը բարձրացնելու համար գյուղատնտեսական և ագրոպարենային հատվածը պետք է կարողանա նաև արդյունավետ կերպով արձագանքել տեղական սպառողների՝ սննդամթերքի անվտանգությանն առնչվող պահանջներին և մրցակցել ներկրվող ապրանքների, իսկ արտահանման դեպքում՝ արտասահմանյան ապրանքների որակական ստանդարտների հետ:

Հայաստանը գյուղատնտեսական մթերքների արտահանման փոքր ծավալների, ցածրարժեք արտադրանքի, սննդամթերքի անվտանգության և որակի բացասական համբավի պատճառով միջազգային շուկաներում ստիպված է լինել «գին ընդունող» և ոչ թե «գին թելադրող»:

Ավելի բարձր արժեք ունեցող ապրանքների շուկաներ մուտք գործելու հնարավորությունները Հայաստանում արտադրված գյուղմթերքների համար սահմանափակ են: Արտահանման իրավիճակի բարելավման տարբերակներից մեկը առանձնահատուկ շուկաների համար (հայկական սփյուռքի և օրգանական սննդամթերքի շուկաներ) ապրանքներ արտահանելն է: Միջազգային շուկաներ մուտք գործելու մեկ այլ տարբերակ է՝ Հայաստանում սննդամթերքի անվտանգության և որակի բարելավումը:

Ներկրող երկրները հաճախ պահանջում են երաշխիքներ, որ սննդամթերքն արտահանվել է այնպիսի վայրերից, որտեղ չկան որոշ տեսակի վնասատուներ և հիվանդություններ, գործում են սննդամթերքի արտադրության, փաթեթավորման և



առաքման հիգիենայի տարրական կանոնները: Արտահանող երկիրը և արտադրական ամբողջ ճյուղը պետք է համապատասխանի այս պահանջներին:

## Գյուղատնտեսության վարկավորման գործընթացը

Ագրարային ոլորտի վարկավորման բարելավումը կարևորում է գրավադրման մեխանիզմների բարելավումը՝ մասնավորապես գրավի առարկայի շրջանակի ընդլայնումը, ինչպես նաև մատչելի տոկոսադրույքի և վարկավորման ժամկետների ապահովումը, պետական երաշխիքների տրամադրումը:



ՀՀ մարզերում և տարածաշրջաններում գյուղատնտեսական հումքի վերամշակման տնտեսավարող սուբյեկտների կարողությունների ուժեղացման և նոր սուբյեկտների ձևավորման նպատակով պետական աջակցության կարևոր գործոն է նպատակային վարկավորումը:

Վարկերի մատչելիության բարձրացման նպատակով պետք է իրականացվի վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման տարբեր ծրագրեր, որոնք նպատակաուղղված կլինեն ոլորտում քաղաքականության իրականացմանը:

## Ճիշտ մարքեթինգ իրականացնելու արդյունքում

Ճիշտ մարքեթինգի իրականացումից ակնկալվում է հանրապետության ագրարային ոլորտի կայունության ապահովում և զարգացում, որը կդրսևորվի տնտեսական և սոցիալական հետևյալ արդյունքներով.

- 🇦🇲 2020թ-ին գյուղատնտեսական արտադրության ծավալը 2007-2009թթ-ի միջին մակարդակը կգերազանցի շուրջ 46%-ով
- 🇦🇲 գյուղատնտեսության մեջ զբաղվածների թվաքանակը կդրսևորի կրճատման միտում (այն 2020թ-ին կկազմի 420 հազ. զբաղված, ներկայիս 493.0 հազ.

զբաղվածության համեմատ) և աշխատանքի արտադրողականության ավելացման հաշվին կապահովվի համախառն արտադրանքի ավելացում

- ✚ գյուղատնտեսության ապրանքայնության մակարդակը 2020թ-ին կհասնի մինչև 75%-ի, որը հնարավորություն կտա էականորեն ավելացնել գյուղացիական տնտեսությունների դրամական հոսքերը և վերարտադրողական կարողությունները
- ✚ 2020թ-ին ցանքային տարածքը կհասցվի 421.0 հազ. հա, որը կգերազանցի 2007-2009թթ-ի մակարդակը շուրջ 39.0%-ով: Նույն ժամանակահատվածում կերային մշակաբույսերի տարածությունը կհասցվի 155.0%-ի, իսկ բազմամյա տնկարկներինը՝ 86.2 հազ. հա
- ✚ դրական տեղաշարժեր կլինեն բուսաբուծության և անասնապահության կառուցվածքում՝ կավելանա պտղի, խաղողի, կարտոֆիլի, բանջարեղենի, կերային և տեխնիկական մշակաբույսերի համախառն արտադրությունը: Անասնապահության մեջ նկատելիորեն կավելանա ոչխարաբուծությունից և թռչնաբուծությունից ստացվող մթերքների տեսակարար կշիռը
- ✚ պարենի և գյուղատնտեսական հումքի արտահանման ծավալները կավելանան 3.5 անգամ
- ✚ կբարձրանա հանրապետության բնակչության պարենային անվտանգության մակարդակը, զգալիորեն կավելանա կարևորագույն պարենամթերքների տեղական արտադրության հաշվին ապահովվածությունը, կավելանա գյուղատնտեսությունում տնտեսավարողների եկամուտները:



## Կառավարում և մոնիտորինգ

ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից հրապարակվող գյուղատնտեսության ոլորտին առնչվող հետևյալ ցուցանիշները հիմք են ծառայելու մոնիտորինգի իրականացման համար.

- գյուղատնտեսության համախառն արտադրանքի արժեքն ըստ բուսաբուծության և անասնապահության ճյուղերի
- գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունները և դրա կառուցվածքը
- բազմամյա տնկարկների տարածքը և կառուցվածքը
- գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակն ըստ տեսակների
- բուսաբուծական հիմնական մթերքների արտադրության ծավալները
- գյուղատնտեսական հիմնական մշակաբույսերի բերքատվությունը
- գյուղատնտեսական կենդանիների մթերատվությունը
- գյուղատնտեսության մեջ զբաղվածների միջին թվաքանակը
- գյուղատնտեսության մեջ մեկ զբաղվածի հաշվով համախառն արտադրանքը (արտադրողականությունը)
- գյուղատնտեսական մթերքների ապրանքայնության մակարդակը
- գյուղատնտեսական մթերքների գները (մանրածախ և գյուղացիական տնտեսությունների կողմից առաջարկվող):



Այս հրատարակությունը (խմբագրությունը) ներկայացնում է <<Հայաստանի գյուղական համայնքներում ագրոկենսաբազմազանության պահպանության և օգտագործման միջոցով կենսապայմանների բարելավում>> ծրագրի արդյունքների մի մասը: Գլոբալ էկոլոգիական Հիմնադրամի (ԳԷՀ) կողմից աջակցվող սույն ծրագիրը համակարգվում է Բիովերսիթի Ինթերնաշնալի (IPGRI) կողմից ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագրի իրականացման աջակցությամբ (UNEP):